

իւր պարտեզներով՝ բոլոր Մշոյ դաշտին վրայ ձգելով իւր հայեցուածքը: Իսկ
Յմատակ Մամիկոնեան, որ աւելի հեռաւոր ազգական էր Գրիգորի, կը բնակէր
Արածանիւտ անդին Խնունի բերդը:

Մեր երկու ճամփորդք եկեղեցուոյ մը քով իշեւանեցան, բայց ինչչա՛վ որ պարզ
էին իրենց զգեստները, ամենուն ուշադրութիւնը վրանին դարձնելու դարձեալ
բան մը կար. եւ այն բանը՝ իրենց արաբացի աննման նժոյգներն ու գէնքերն էին:
Ուստի շատ ժամանակ չանցաւ, երկրորդ առաւօտուն հրաւեր եկաւ տեսութեան
Մամիկոնեան իշխանեն Եղեսիոյ եկող երկու հիւրերու: Գրիգոր արդէն կը
փափագէր այդպիսի մի տեսութեան, գրեթէ վստահ լինելով թէ հօրեղբայրը
զինք չէր կարող ճանչել, վասնզի տասը տարիէ ի վեր տեսած չունէր. ուստի
միայն քանի մը հրահանգներ տուաւ Գագրիկի, որ միգուցէ անհամաձայն
գտնուին իրենց խօսակցութեանց մէջ:

Ժամանակը ձմեռ էր, կաղնի փայտի փայլուն կրակ մը կը ճարճատէր
վառարանին մէջ. Մամիկոնեան նախարարը իւր գահույից վրայ նստած,
սամոյրներու մէջ թաղուած, հիմնամեայ մարդ մ'էր Գրիգոր զինք հազիւ կրցաւ
ճանչել, այնչափ վախուած էր եւ ժամանակէն առաջ ալեւորեալ, այտերը
խոռոչացեալ բայց իւր կապոյտ աչքերը դեռ շատ հուր ունէին եւ շատ
խորամանկութիւն: Երբ Գրիգոր ներս մտաւ՝ ըստ հայկական սովորութեան
գնաց ձեռքը պագաւ, Մուշեղ քովը տեղ ցցուց եւ հրամայեց նստիլ. իւր
սովորութիւնն էր. խոր աչքերը ուղղելով երիտասարդին՝ լաւ մը զննելէն վերջ՝

– Բարի ես եկեր, – ըսաւ, – լսեցի թէ Եղեսիոյ կ'ողմերեն կ'ուզաք, այդ կողմերը
պէտք է շատ վտանգաւոր լինին այս ժամանակներս:

– Այո՛, Տէր, – պատասխանեց Գրիգոր անխռով պարզութեամբ, – բայց մենք,
գոհութիւն աստուծոյ, անվտանգ եկանք:

– Ո՞ւր տեղացի ես դու, որդեակ:

– Շիրակայ կ'ողմերեն:

– Ի՞նչ գործով գնացիր Եղեսիա:

– Ազգականի մը ժառանգութիւն կար, այն առնելու համար.

– Գոնէ յաջողեցա՞ր, նպատակիդ հասա՞ր: